Մ. Գևորգյանին
ուղարկվում է կատարման
Ա.Ֆ. Մ. Մարտիրոսյան
01.12.2017թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի գլխավորած պատվիրակությունը դեկտեմբերի 4-ից 6-ը Մոսկվայում մասնակցելու է Ռուսաստանի Դաշնության մարդու իրավունքների հանձնակատարի կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանսին:

Տարածաշրջանային երկրների միջև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում արդյունավետ համագործակցության նպատակով կոնֆերանսի շրջանակներում նախատեսվում է ստորագրել Եվրասիական օմբուդսմանների դաշինքի ստեղծման մասին հուշագիր:

Այցի նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել 89.250 (ութսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ՝ համապատասխան ներկայացուցիչներին հանձնելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
օգնական

Ջուլիետա Բաղդասարյան
01.12.2017